

Ապրեսյան Մ.
Այվազյան Ա.

Երևանի պետական համալսարան

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

ABSTRACT ON SOME PRINCIPLES OF TEACHING LEGAL ENGLISH

The article aims at highlighting the most challenging aspects of teaching Legal English including its total and comprehensive interpretations as well. In the frame of this article an attempt is made to elaborate fundamental tenets in legal English teaching process. The role of the teacher is to help students cope with difficulties caused by systembound nature of legal vocabulary, which means spending time and effort on mastering the subject content.

Key words: *English for Special Purposes, legal discourse, educational process, communicative skills.*

РЕЗЮМЕ ОБ ОСНОВНЫХ ПРИНЦИПАХ ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА ДЛЯ ЮРИСТОВ

Данная статья направлена на выявление ключевых принципов преподавания английского языка для юристов. В статье делается попытка разработки ключевых моментов в процессе преподавания профессионального английского языка. В частности, подчеркивается, что функция преподавателя заключается в том, чтобы помочь студентам преодолеть трудности в понимании юридических профессиональных текстов, а также специализированной лексики, что является длительным процессом и требует значительных усилий.

Ключевые слова: *английский для профессиональных целей, правовой дискурс, учебный процесс, коммуникативные способности.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նպատակ ունի ծառայելու իրավաբանական անգլերենի դասավանդման առանցքային հարցադրումների ճշգրտմանն ու բացահայտմանը, ինչպես նաև վերոհիշյալ դասընթացի շուրջ ծառայած խնդիրների համապարփակ լուծմանն ու համակարգային վերլուծությանը: Ըստ առարկայական տիրույթի՝ հոդվածում փորձ է արվում մշակելու և պատշաճ կերպով ներկայացնելու իրավաբանական անգլերենի դասավանդման պրոցեսի վերաբերյալ առաջադրված բոլոր հայեցակարգերը և առանցքային դրույթները: Մասնավորապես ընդգծվում է, որ դասավանդողի գործառույթն է օգնել ուսանողներին հաղթահարել իրավաբանական տեքստերի և տերմինաբանության ընկալման դժվարությունները, որն ինքնին ժամանակատար գործընթաց է և պահանջում է մեծ ջանքեր:

Քանակի բառեր՝ անգլերենը մասնագիտական նպատակների համար, իրավական դիսկուրս, ուսուցման գործընթաց, հաղորդակցման կարողություններ:

Անգլերենի դասավանդումը հատուկ (մասնագիտական) նպատակներով (English for Special Purposes – ESP) համեմատաբար նոր ուղղություն է օտար լեզվի դասավանդման տիրույթում՝ պայմանավորված գիտության և տեխնիկայի սրընթաց զարգացմամբ, ներքին և արտաքին շուկայում գործադրվող քաղաքական ու տնտեսական ռազմավարությամբ:

Միջազգային բիզնեսի, տնտեսության, տեխնիկայի և գիտության, ինչպես նաև օրենսդրական դաշտի զարգացումն օտար լեզվի մասնագետների և գիտնականների մեծ պահանջարկ առաջացրեց: Ուստի անհրաժեշտություն դարձավ գիտական մակարդակով մշակել և զարգացնել «Օտար լեզուն մասնագիտական նպատակներով» դասավանդման նոր մեթոդիկա, որը հնարավորություն է տալիս պատրաստելու մասնագետների և գիտնականների մի մեծ բանակ՝ ՀՀ գիտական պոտենցիալը միջազգային ասպարեզում պատշաճ կերպով ներկայացնելու համար:

Անժխտելի է այն փաստը, որ իրավաբանական անգլերենն այսօր հանդես է գալիս որպես հույժ կարևոր ենթալեզու միջազգային հարթակում: Վերջին ժամանակներում օրենքի լեզվի արտալեզվական հիմքն ընդլայնվել է՝ ներառելով միջազգային, քաղաքական, արտաքին և ներքին շահերի բախումը: Հետևաբար իրավաբանական անգլերենի գործառական առանձնահատկությունների կարևորության գիտակցումը կարող է, անշուշտ, իր նպաստը բերել իրավաբանական անգլերենի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու՝ անգլերենի կիրառության առաջընթացը պատշաճ մակարդակով խթանելու գործընթացին:

Պայմանավորված իր ուսուցման կենսական անհրաժեշտությամբ ու արդիականությամբ՝ անգլերենը լուրջ ուշադրության է արժանացել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայտնի է, որ բանիմաց և բազմակողմանիորեն զարգացած մասնագետը յուրաքանչյուր բնագավառում, մասնավորապես՝ իրավագիտության ոլորտում, օտար լեզվի միջոցով կարող է մշտապես իրագեկ լինել շրջապատող աշխարհի նորություններին:

Հարկ է ընդգծել, որ վերջին տասնամյակում նշանակալից փոփոխություններ են կատարվել օտար լեզուների դասավանդման մեթոդաբանական հայեցակարգում: Դրանք առաջին հերթին վերաբերում են ուսուցման նպատակների կանխորոշմանը: Մասնավորապես, ամրագրված է այն դրույթը, որ հարկ է օտար լեզուն ուսուցանել ոչ թե սոսկ իբրև հաղորդակցման, այլ իբրև մասնագիտական հաղորդակցման միջոց՝ ելնելով տարբեր բնագավառների մասնագետներին այսօր առաջադրվող արդիական պահանջներից (Hoffman, 2011):

Առավել հետաքրքրական է, որ, չնայած անգլերենի դասավանդման նյութերի առերևույթ բազմազանությանն ու առանձնահատկություններին, գոյություն ունեն սահմանված և հստակ ամրագրված որոշակի սկզբունքներ և չափորոշիչներ, որոնք ընդհանուր են բոլորի համար: Նախ և առաջ սովորողները պետք է կարողանան ընկալել հաղորդակցման համատեքստի և նրա որոշակի մակարդակին բնորոշ լեզվի

կարևորությունը, ինչպես նաև մայրենի լեզվում ձեռք բերած հմտությունների օգտագործման անհրաժեշտությունն օտար լեզու սովորելիս: Անհրաժեշտ է սովորողին ուսուցանել, թե ինչպես սերտել՝ առանձնահատուկ տեղ հատկացնելով նրա ինքնուրույնությանը: Այս ամենը պետք է ուղեկցվի տարաբնույթ դիդակտիկ նյութերի և մեթոդների օգտագործմամբ: Դասընթացի կազմակերպումը նման սկզբունքներով, անշուշտ, նպաստում է հատուկ (մասնագիտական) նպատակներով անգլերենի (ESP) դասավանդման արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես՝ օրենքի լեզվի ուսումնասիրության շրջանակներում (Tharp; Gallimore, 1988):

Որպես կանոն, Իրավաբանական ֆակուլտետ ընդունված ուսանողները պետք է ունենան անգլերենի պատշաճ գիտելիքներ (առնվազն B1-B2 մակարդակ): Հետևաբար դասախոսի խնդիրն է խորացնել այդ գիտելիքները վարժությունների և այլնայլ առաջադրանքների միջոցով՝ հասնելով նրան, որ այդ գիտելիքները գործնականում վերածվեն կայուն մասնագիտական հմտությունների և կարողությունների: Հարկ է նշել, որ խիստ կարևոր է կարճատև ժամանակահատվածում դրանք ամրապնդել այն կառուցվածքների և բառապաշարի սահմաններում, որոնք անհրաժեշտ են ինչպես ուսումնասիրվող օտար լեզվով (անգլերեն) մասնագիտական գրականությունից օգտվելու, այնպես էլ մասնագիտական հարցերի շուրջ բանավոր արտահայտվելու համար:

Դասընթացի նպատակն է գիտահանրամատչելի և գիտական մակարդակի անգլերենի տիրապետումը՝ ինչպես առօրյա հաղորդակցության ընթացքում, այնպես էլ մասնագիտական գործունեության մեջ ակտիվորեն կիրառելու համար:

Այսպիսով, մասնագիտական անգլերենի դասավանդումը իրավաբանական ֆակուլտետում հետապնդում է հետևյալ նպատակները՝

- ✓ լեզվական իրազեկության զարգացում, գիտելիքների և կարողությունների ձեռքբերում՝ բառապաշարի, շարահյուսության, ինչպես նաև լեզվի (անգլերեն) առանձնահատկությունների սուբյեկտի ամրագրում,

- ✓ հաղորդակցության գործընթացների և խոսքային գործունեության մեջ ուսանողների ներգրավման մակարդակի բարձրացում,
- ✓ մասնագիտական տեքստերի ընկալման կարողությունների զարգացում,
- ✓ ազատ հաղորդակցվելու հնարավորություն անգլախոս հաճախորդների և արտերկրի իրավաբանների հետ,
- ✓ պրեզենտացիաների և բանակցությունների վարում իրավական համատեքստում,
- ✓ իրավական բառապաշարի հարստացում,
- ✓ իրավական տերմինների և արտահայտությունների կիրառում,
- ✓ տեքստերում ներկայացված իրավական դեպքերի կարևորագույն դրույթների վերլուծում և գնահատում,
- ✓ մասնակցություն անգլերենով անցկացվող սեմինարներին,
- ✓ համառոտ ամփոփագրի պատրաստում:

Վերոհիշյալ նպատակներով լեզուն սովորելիս լեզվում թույլատրելի են միայն այնպիսի լեզվական սխալները, որոնք չեն խոչընդոտում կոնտեքստի իմաստաբանական ընկալմանը:

Հատկանշական է, որ ուսումնական գործընթացի կազմակերպումը նախատեսում է պահանջարկի առավելագույն հաշվարկ, ինչպես նաև հաշվի են առնվում սովորողի անհատական յուրահատկությունները: Ուսանողն ուսուցման գործընթացի լիարժեք մասնակիցն է: Այն հիմնվում է օբյեկտիվ իրականության ընկալման և դասախոսի փոխգործունեության սկզբունքների վրա, անմիջականորեն պայմանավորված ուսանողի ինքնուրույնության զարգացման և նրա ստեղծագործական ակտիվության, ինչպես նաև ուսուցման արդյունավետության համար դասախոսի ունեցած պատասխանատվությամբ (Feak; Reinhart, 2002):

Իրավաբանական անգլերենի ուսուցման դասընթացը նախատեսում է պարապմունքների հետևյալ ձևերն ու մեթոդները՝

- լսարանային՝ գործնական պարապմունքներ դասախոսի ղեկավարությամբ,

- ուսանողի պարտադիր ինքնուրույն աշխատանք տանը (մասնագիտական տեքստերի վերարտադրում, ինչպես նաև հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն մասնագիտական թարգմանություններ),
- ուսանողի անհատական ինքնուրույն աշխատանք դասախոսի ղեկավարությամբ և խորհրդատվությամբ (մասնագիտական պրեզենտացիաներ – PowerPoint presentations),
- անհատական և թիմային աշխատանք,
- խորհրդատվություններ (կոսուլտացիա):

Առանցքային է ընդգծել, որ «Անգլերեն» դասընթացի լեզվական նյութերն ընտրվում են ըստ առարկայական տիրույթի (իրավագիտությանը վերաբերող): Նախատեսվում է յուրացնել մասնագիտական տերմինաբանությունը և հիմնական հասկացությունները: Ուսանողները սովորում են սահմանել տերմինները, բացատրել հիմնական հասկացությունները, ընկալել և վերլուծել մասնագիտական տեքստը (Bhatia, 1982; Candlin, Bhatia, Jensen, Langton, 2002):

Ավելին՝ անգլերենի ուսուցումը հիմնված է խոսքի գործառույթային-ձևաբանական տարանջատման հայեցակարգի և ըստ բովանդակության ու փոխաբերության բարդության աստիճանի լեզվական նյութի աստիճանավորման սկզբունքի վրա: Դասընթացի շրջանակներում հույժ կարևորություն են ներկայացնում ստորև նշված սկզբունքների կիրառումը.

- լեզվական նյութի մատուցման մեջ ֆունկցիոնալ գործառույթային մոտեցման կիրառում, արտահայտման առավել կիրառվող և չեզոք եղանակների յուրացում,
- փոխաբերական աստիճանավորման սկզբունքի պահպանում (ուսուցման նախնական փուլերում ակտիվ յուրացման ենթակա են փոխաբերաբար սահմանափակված տեքստերը, ապա՝ փոխաբերաբար ավելի լիարժեքները),
- լեզվական գործունեության տարբեր տեսակների՝ խոսելու, լսելու, կարդալու և գրելու համալիր (համակցված) ուսուցում,

- գրավոր տեքստի վերաձևակերպում մասնագիտական բառապաշարի օգնությամբ, ինչը թույլ է տալիս գուգակցել լեզվական գործունեության տարբեր տեսակներ,
- տեսալսողական ու մուլտիմեդիական նյութերի մանրակրկիտ ընտրություն և աստիճանավորում՝ ըստ ընկալման ու լեզվական դժվարության աստիճանի, և համապատասխանեցում՝ կախված ուսուցման տարբեր փուլերում ուսանողների լեզվական ու մասնագիտական պատրաստվածության աստիճանից,
- խնդիրների լուծման ռազմավարության մշակում, տարբեր աղբյուրներից մասնագիտական տեղեկատվության առանձին հատվածների համադրում և շարադրում:

Վերոնշյալ դասընթացը լրացվում է արտալսարանային տարբեր աշխատանքներով, որոնց բնույթը որոշվում է՝ ելնելով ուսանողների շահերից՝ անզլերենով դատախաղեր, լեզվակիր իրավաբանների հետ հանդիպումներ, աշխատանք համակարգչային (լինգվաֆոնային) լաբորատորիաներում (listening section) և այլն: Ուսումնական դիաֆիլմերը և մասնագիտական (իրավագիտությանը վերաբերող) կինոնկարները նույնպես կիրառվում են որպես ուսումնական լրացուցիչ նյութ:

Ներկայացվող դասընթացի ընթացքում անզլերենով ուսումնասիրվող թեմաներն են՝ Քրեական և քաղաքացիական իրավունք, Եվրոպական և միջազգային իրավունք, Մարդու իրավունքների հիմունքներ, Ընտրական իրավունք, Պրոբացիոն ծառայություններ, Ընտանեկան իրավունք, Մունիցիպալ իրավունք, այլընտրանքային պատժատեսակներ, անչափահասների կողմից կատարվող հանցագործություններ և այլն:

«Իրավաբանական անզլերեն» դասընթացի ուսուցման ավարտին ուսանողը՝

- ✓ կտիրապետի մասնագիտական և ընդհանուր բառապաշարի հենքային շերտերին՝ դրանց ճշգրիտ գործածության նպատակադրմամբ,
- ✓ կտիրապետի լեզվական հմտություններին մասնագիտական հարթակում (իրավագիտության ոլորտում),

- ✓ կհասկանա և ճիշտ կօգտագործի մասնագիտության հիմնական տերմինաբանությունը,
- ✓ կունենա իր գիտելիքի կամ գործունեության ոլորտի երկլեզու տերմինաբանական բառարանների և տեղեկատուների հետ աշխատելու հմտություն,
- ✓ կկարողանա կարդալ անգլերենով ստեղծած գրականությունը լայն և նեղ մասնագիտական տեղեկատվություն ստանալու նպատակով,
- ✓ կհասկանա բանավոր խոսքը և կկարողանա վարել զրույց-երկխոսություն մասնագիտական թեմաներով,
- ✓ կտիրապետի հրապարակային խոսքի հիմունքներին՝ իր մասնագիտությամբ զեկուցում կարդալու համար,
- ✓ կկարողանա վերաձևակերպել գրավոր տեքստը՝ բանավոր ներկայացնելու համար,
- ✓ կկարողանա անգլերենով գրել անոտացիա, ռեֆերատ, ատենա-խոսություններ, գործնական նամակ, CV և այլն,
- ✓ կկարողանա մասնակցել մասնագիտական զրույցներին՝ «կարծիքների պարզաբանում», «տեղեկությունների հաղորդում», «համաձայնում-առարկում» և այլն,
- ✓ կկարողանա արդյունավետորեն օգտվել տեղեկատվական տարբեր աղբյուրներից (գրականություն, համացանց և այլն):

Ամփոփելով վերոնշյալ դրույթները՝ պետք է ընդգծել՝ «անգլերենի դասավանդումը հատուկ (մասնագիտական) նպատակներով» (իրավաբանական անգլերեն) դասընթացը կազմակերպվում է ըստ ուսանողների պահանջների գնահատման և բխում է ՀՀ կրթական պահանջներից ու չափորոշիչներից: Այն ակնհայտ անհրաժեշտություն է ապագա իրավաբանների համար՝ պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ և գլոբալիզացիոն գործընթացով: Ավելին՝ ներկայումս մեծանում է այն իրավաբանների պահանջը, ովքեր վարժ տիրապետում են անգլերենին, որի իմացությունը լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում ապագայում աշխատանք գտնելու համար:

Այս ամենին մնում է հավելել, որ մասնագիտական անգլերենին տիրապետող իրավաբանները մեծ պահանջարկ են վայելում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում՝ իրենց լեզվական ու մասնագիտական գիտելիքները կիրառելով պետականաշինության զարգացման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Hoffman C.** (2011). *Using Discourse Analysis Methodology to Teach “Legal English”*. Georgetown University Law Center.
2. **Tharp R. G., Gallimore R.** (1988). *Rousing Minds to Life: Teaching, Learning, and Schooling in Social Context*. Cambridge: Cambridge University Press.
3. **Bhatia V. K.** (1982). *Legal English – a brief review of relevant literature. English for Specific Purposes*, special issue.
4. **Candlin C., Bhatia V.K, Jensen C., Langton N.** (2002). “Developing legal writing materials for English second language learners: problems and perspectives”. *English for Specific Purposes* 21: 299-320.
5. **Harris S.** (1997). “Procedural vocabulary in law case reports”. *English for Specific Purposes* 16: 289 -308.
6. **Feak C., Reinhart S.** (2002). “An ESP program for students of law”. *In English for Specific Purposes*. T. Orr (ed), 7-24.
7. **Леонидова Г. Ю.** (1997). *Just English*, Ассоциация “Гуманитарные Знание”, Москва.

Ապրելայան Մարգարիտ – բ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, էլ. փոստ՝ english@ysu.am:

Այվազյան Աննա - դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ a.ayvazyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն՝ 20.09.19, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի և «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» միջազգային պարբերականի խմբագրակազմի կողմից, ընդունվել է տպագրության՝ 27.11.19: